

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
11.01.2012թ. թիվ 1/02Ա ՈՐՈՇՈՒՄ

«ԱՐԾԱԹԵ ԳԱՎԱԹ» ՍՊԸ ԳՐԱՎԱՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումը թույլ տալու համար «Արծաթե Գավաթ» ՍՊԸ գրավատանը հայտարարել նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գրավատուն մուտքագրվելու կամ Գրավատան՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ

Ամփոփ նյութ

«ԱՐԾԱԹԵ ԳԱՎԱԹ» ՍՊԸ ԳՐԱՎԱՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 11.01.2012թ. թիվ 1/02Ա որոշմամբ «Արծաթե Գավաթ» ՍՊԸ գրավատան կողմից արժութային օրենսդրության պահանջները խախտելու համար՝ գրավատան նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

